

Երևան Մոլ Ակումբային Քարտ. Հիմնական կանոններ և պայմաններ

1. Ինչ է ակումբային քարտը

Երևան Մոլի ակումբային քարտը հնարավորություն է տալիս կատարած գնումների դիմաց կուտակել միավորներ և հետագայում որոշակի սահմանաչափի հասնելուց հետո դրանք փոխարինել մոլի խանութների կողմից առաջարկվող զեղչերի, հատուկ առաջարկների և նվերների հետ, կամ մասնակցել քարտապանների միջև խաղարկություններին:

2. Ինչպես է գործում ակումբային քարտը և ինչ առավելություններ է ընձեռնում

- 2.1 Երևան Մոլ ակումբային/հավատարմության ծրագրի յուրաքանչյուր քարտապան, կատարելով գնումներ Մոլի յուրաքանչյուր խանութից, կուտակում է համապատասխան միավորներ:
- 2.2 Միավորները գրանցելու համար հաճախորդը իր կատարած ՀԴՄ կտրոններով (կտրոնների նվազագույն արժեք չի սահմանվում) պետք է մոտենա Երևան Մոլի տեղեկատու բաժին և գրանցի իր կտրոնները համակարգում: ԿինոՊարկից և Նավապետ Քիդի գանձերի կղզուց արված գնումների դեպքում կտրոնները գրանցվում են տեղում՝ դրամարկղում:
- 2.3 ՀԴՄ կտրոնները մնում են Երևան Մոլի տեղեկատու բաժնում/ ԿինոՊարկում/Նավապետ Քիդի գանձերի կղզում և գրանցելուց հետո ենթական չեն վերադարձվում: Եթե առկա է գնումը վերադարձնելու հավանականություն, ապա խորհուրդ ենք տալիս համապատասխան ՀԴՄ կտրոնները ներկայացնել գնման վերադարձման թույլատրելի ժամկետի ավարտից հետո:
- 2.4 Միավորների կուտակումը կատարվում է ըստ հետևյալ բանաձևի՝ $1000 \text{ ՀՀ դրամ} = 1$ միավոր:
- 2.5 Քարժուրից ներկայացված կտրոնների դեպքում 1000 դրամի դիմաց կուտակվում է 0.3 միավոր:
- 2.6 ԿինոՊարկից և Նավապետ Քիդի գանձերի կղզում գրանցված կտրոնների դեպքում յուրաքանչյուր 1000 դրամի դիմաց կուտակվում է 50 դրամ քեշբեք, որը կարող է օգտագործվել միայն ԿինոՊարկից կամ Նավապետ Քիդի գանձերի կղզուց գնումներ կատարելու համար: Այս օրենքը ուժի մեջ է մտնում 2017թ. սեպտեմբերի 5-ից և չի տարածվում մինչ այդ ժամկետը գրանցված կտրոնների գրանցումից տրամադրված միավորի չափի վրա:
- 2.7 Հաճախորդը մեկ օրվա ընթացքում կատարած գնումների համար առավելագույնը կարող է կուտակել 500 միավոր, իսկ մեկ ամսվա ընթացքում կատարած գնումների համար 1000 միավոր:
- 2.8 Երևան Մոլի, ինչպես նաև Երևան Մոլում տեղակայված վարձակալների աշխատակիցները* կարող են ստանալ Երևան Մոլի ակումբային քարտ, սակայն պետք է պարբերաբար փոխանակեն իրենց միավորները տարբեր ակցիաների և հատուկ առաջարկների հետ: Վարձակալների աշխատակիցների կողմից աշխատանքային դիրքի չարաշահումներ նկատելու դեպքում քարտապանի ներկայացրած որոշ ՀԴՄ կտրոններ կարող են մոլի տեղեկատու բաժնի աշխատակիցների կողմից մերժվել համակարգում գրանցման համար:

*Երևան Մոլի, ինչպես նաև Երևան Մոլում տեղակայված վարձակալների աշխատակիցները չեն կարող լինել ամենաշատ միավորներ կուտակած 100 հաճախորդների ցուցակում

- 2.9 Հաճախորդն իր կուտակած միավորները չի կարող փոխանցել մեկ այլ քարտապանի:
- 2.10 Մեկ հաճախորդը չի կարող ունենալ մեկից ավելի քարտ:
- 2.11 Քարտապանները կուտակած միավորները կարող են փոխարինել Երևան Մոլի խանութների կողմից առաջարկվող նվերների հետ:
- 2.12 ԿինոՊարկից արված գնումների դիմաց ստացած քեշբեքը կարող է օգտագործվել ԿինոՊարկում: Իսկ Նավապետ Քիդի գանձերի կղզուց արված գնումների դիմաց ստացած քեշբեքը Նավապետ Քիդի գանձերի կղզում:
- 2.13 Ինչպես ԿինոՊարկից, այնպես էլ Նավապետ Քիդի գանձերի կղզուց արված գնումների դիմաց ստացած քեշբեքը կարող են օգտագործվել Երևան Մոլից առաջարկվող նվերները վերցնելու համար: Տվյալ դեպքում կուտակած քեշբեքը օգտագործելիս 1 ՀՀ դրամը համապատասխանում է 1 միավորի:
- 2.14 Հաճախորդը կարող է իր կուտակած միավորների քանակը և դրանց դիմաց համապատասխան խրախուսումներն ու նվերները ստուգել առցանց՝ club.yerevanmall.am կայքում:
- 2.15 Ցանկացած պահի Երևան Մոլը կամ մոլում գործող խանութները 0 միավորի դիմաց իրենց կողմից կարող են առաջարկել նվերներ բոլոր քարտապաններին, կամ կոնկրետ որևէ քարտապանին՝ իր ցուցաբերած ակտիվության համար:
- 2.16 Երևան Մոլի ակումբային քարտը տալիս է բազմաթիվ առավելություններ նաև մոլի տարածքից դուրս: Ստորև ներկայացված է ցանկը՝
- <<Իդեալ Համակարգի>> խանութ սրահներում 20% զեղչ: Եթե խանութում տվյալ պահին գործում է զեղչ, ապա տրվում է ամենամեծ հնարավոր զեղչը:
 - <<Կամի>> ակումբում 10% զեղչ:
 - <<Aperitivo>> զինետանը 15% զեղչ:
 - <<Սիմոնա>> բարում 15% զեղչ:
 - <<Crumbs>> սրճարանում 10% զեղչ:
 - <<Square One>> սրճարանում 10% զեղչ:
 - <<Segafredo>> սրճարանում 10% զեղչ:
 - <<Cinnabon>> սրճարանում 10% զեղչ:
 - <<The View Lounge>> ռեստորանում 10% զեղչ:
 - <<Hans&Franz>> ռեստորանում լանչի ժամին (12:00-15:00) 10%, այլ ժամերին 5% զեղչ:
 - <<Louis Charden>> ռեստորանում լանչի ժամին (12:00-15:00) 5%, այլ ժամերին 10% զեղչ:
 - <<Louis Charden>> խանութ-սրահում 10% զեղչ:
 - <<ROF Barbershop>> տղամարդկանց վարսավիրանոցում 10% զեղչ:
 - <<Sergey Zverev>> գեղեցկության սրահներում 20% զեղչ: Տպագրիչների 9, Հրայսա Քոչար 24, Տիգրան Պետրոսյան 51 և Քեռու 156/3: Չեղչը չի տարածվում էլոս էպիլացիա, տատուաժ և մազերի արհեստական երկարեցում ծառայությունների վրա:
 - <<ONE WAY TOUR>> ընկերության ներքին տուրերի համար 10% զեղչ: Չեղչը չի գործում ընթացիկ ակցիաների և զեղչերի ժամանակ: Տուրի արժեքը ակումբային քարտով զեղչվում է միայն քարտապանի համար: Վերը նշված զեղչերը ստանալու համար Ակումբային Քարտի առկայությունը պարտադիր է:

3. Նախագծի շրջանակներում անցկացվող խաղարկությունների կանոնները

3.1 Յուրաքանչյուր եռամսյակ ամենաշատ միավոր ունեցող քարտապանների միջև կազմակերպվում են խաղարկություններ, որոնց անցկացման ամսաթվի մասին քարտապաններին նախապես տեղեկացվում է հաճախորդների անձնական էջում՝ ծանուցման տեսքով:

3.2 Խաղարկության հաջորդ օրը մասնակից քարտապանների կուտակած միավորները ենթակա են գրոյացման:

3.3 Խաղարկությանը մասնակցող քարտապանների ցանկում կարող է Երևան Մոլի կողմից տեղի ունենալ փոփոխություն, եթե

3.3.1 Քարտապանների ցանկում հայտնվել են Երևան Մոլի և մոլում տեղակայված վարձակալների աշխատակիցները:

3.3.2 Քարտապանը ներկայացրել է իրեն չպատկանող կտրոններ:

3.4 Խաղարկության օրերին քարտապանները պետք է ներկայանան իրենց անձնագրով և ակումբային քարտով:

3.5 Այն քարտապանները, ովքեր ներկա չեն լինի խաղարկությանը, չեն մասնակցի դրան:

3.5.1 Խաղարկության օրը, խաղարկությունից առնվազն 1 ժամ առաջ տեղի է ունենալու խաղարկության մասնակիցների գրանցում: Այս հաճախորդները, ովքեր չեն լինի գրանցված ցուցակում, չեն մասնակցի խաղարկությանը:

3.5.2 Այն քարտապանները, ովքեր խաղարկության օրը նախապես գրանցվել են և շահել են մրցանակ, իրավասու են ստանալ մրցանակը մինչև խաղարկության օրվա ավարտը:

3.6 Խաղարկության ընթացքում կազմակերպիչը իրավունք ունի կատարել նախապես հայտարարված կանոնների փոփոխություն:

4 Ով կարող է ստանալ Երևան Մոլի ակումբային քարտ

4.1 Երևան Մոլի ակումբային քարտ կարող է ստանալ յուրաքանչյուր ոք, ով Երևան Մոլից, ԿինոՊարկից կամ Նավապետ Քիդի գանձերի կղզուց կկատարի միանվագ կամ կուտակային 15.000 ՀՀ դրամ և ավել գնումներ և համապատասխան ՀԴՄ կտրոնները կներկայացնի Երևան Մոլի տեղեկատու բաժին/ ԿինոՊարկ/ Նավապետ Քիդի գանձերի կղզի:

4.2 Քարտ ստանալու համար Ֆուդկորտից և սննդի այլ կետերից ներկայացված ՀԴՄ կտրոնների հանրագումարը սահմանվում է 10,000 ՀՀ դրամ:

4.3 Քարտ ստանալու համար հարկավոր է ներկայացնել միայն մինչև մեկ ամիս վաղեմություն ունեցող ՀԴՄ կտրոններ, այսինքն ամենահին և ամենանոր կտրոնների միջև ընկած ժամանակահատվածը չպետք է գերազանցի 1 ամիսը:

4.4 Քարտը ստանալու ժամանակ տեղեկատու բաժնի աշխատակցի կողմից արվում է հաճախորդի լուսանկարը, որը կցվում է քարտապանի անձնական էջին:

4.5 Քարտը ստանալուց հետո, հաճախորդի էլեկտրոնային փոստին ուղարկվում է հաղորդագրություն՝ քարտի ակտիվացման հղումով: Քարտը ակտիվացնելուց հետո հաճախորդը կարող է ցանկացած պահի մուտք գործել իր անձնական էջ՝ միավորներին և առկա նվերներին ծանոթանալու համար:

4.6 ՀԴՄ կտրոնների նվազագույն արժեք չի սահմանվում:

4.7 Նախագծին չեն մասնակցում մոլի տարածքում գործող սպասարկման կենտրոնները (բանկեր, բջջային օպերատորներ և այլն) հետևաբար այդ կետերից ներկայացված ՀԴՄ կտրոնները չեն ընդունվում ակումբային քարտ տրամադրելիս կամ միավորներ կուտակելիս (բացառություն են կազմում բջջային հեռախոսների վաճառքի ՀԴՄ կտրոնները):

4.8 Միավորներ կուտակելու նպատակով քարտապանները կարող են ներկայացնել միայն 2017թ. հունվարի 3-ից հետո կատարված գնումների ՀԴՄ կտրոնները:

4.9 Քարտը կորցնելու դեպքում հաճախորդը պետք է տեղեկացնի մոլին քարտի կորստի մասին՝ այն ապակտիվացնելու և նոր քարտ ստանալու համար (հաճախորդը պետք է ներկայանա անձնագրով):

5 Ինչպես միավորները փոխարինել նվերներով

5.1 Քարտը ակտիվացնելուց հետո հաճախորդն իր անձնական էջի <<Հասանելի նվերներ>> էջում կարող է տեսնել տվյալ պահին հասանելի նվերների ցանկը, քանակը և վերջիններիս ձեռք բերման համար անհրաժեշտ միավորների քանակը:

5.2 <<Հասանելի նվերներ>> էջում կարող է հայտնվել նաև <<Անակնկալ նվերներ>> բաժին, որտեղ ներկայացվում են Երևան Մոլի կամ մոլի խանութների կողմից տրամադրվող նվերները, որոնք վերցնելու համար որևէ միավոր հարկավոր չէ:

5.3 Որևէ նվեր վերցնելու համար հաճախորդը պետք է սեղմի նվերի վրա, այնուհետև հետևի անհրաժեշտ քայլերին: Նվերն ընտրելուց հետո այն կհայտնվի <<Իմ նվերները>> բաժնում:

5.4 <<Իմ նվերները>> բաժնում կարող է հայտնվել նաև <<Նվեր Երևան Մոլից>> անվանումով նվեր, որը հիմնականում տրամադրվում է կոնկրետ քարտապանի՝ որպես որևէ կոնկրետ խանութի հավատարիմ հաճախորդ:

5.5 Հաճախորդը համապատասխան միավորներ ունենալու դեպքում կարող է ստանալ մրցանակը, եթե քարտը ստանալուց հետո առնվազն մեկ անգամ գնում է կատարել տվյալ նվերը տրամադրող խանութից:

5.6 Երբեմն հաճախորդը համապատասխան միավորներ ունենալու դեպքում կարող է ստանալ մրցանակը, եթե քարտը ստանալուց հետո տվյալ նվերը տրամադրող խանութից կատարել է որևէ ֆիքսված քանակի գնում: Տվյալ պարագայում նվերի նկարագրության դաշտում նշված կլինի նվազագույն գնման չափը:

5.7 Նվերը ընտրելուց հետո հաճախորդն այն չի կարող հետ փոխանակել միավորների հետ:

5.8 Նվերը ֆիզիկապես ստանալու համար հաճախորդը պետք է քարտով ներկայանա մոլի տեղեկատու բաժին՝ նվերի ստացականը ստանալու համար:

5.9 Նվերի ստացականը պետք է կնիքված լինի Ակումբային Քարտ նախագծի <<Club Card>> կնիքով:

5.10 Նվերի ստացականը պետք է ներկայացնել նվերը տրամադրող խանութ՝ այն ստանալու համար:

5.11 Ցանկացած նվեր ունի նախապես ֆիքսված քանակություն և վավերականության ժամկետ: Եթե հաճախորդը նվերը վերցնելուց հետո չի ներկայացել մոլի տեղեկատու բաժին մինչև նվերի վավերականության ժամկետի ավարտը, ապա նվերը համարվում է անվավեր և հաճախորդը չի ստանում փոխհատուցում:

5.12 Հաճախորդը նվերը վերցնելուց հետո չի կարող այն փոխել մեկ այլ նվերի կամ միավորների հետ:

- 5.13 Նվերի որակի, արտաքին տեսքի և հնարավոր անհամապատասխանության դեպքում պատասխանատվությունը կրում է խանութը:
- 5.14 ԿինոՊարկից և Նավապետ Քիդի գանձերի կղզուց տրամադրվող նվերների ցանկը ներկայացված է հաճախորդի անձնական էջի համապատասխան բաժիններում: Նվերը վերցնելու համար քարտապանը պետք է մոտենա համապատասխան դրամարկղ՝ ներկայացնելով ակումբային քարտը:

6 Այլ դրույթներ

- 6.1 Ակումբային քարտը կարող է հետ պահանջվել Երևան Մոլի կողմից, եթե այն փաստացի վարվում է ոչ թե քարտապանի, այլ երրորդ անձի կողմից:
- 6.2 Եթե հաճախորդը ներկայանում է տարբեր հաճախորդների ակումբային քարտերով, ապա Երևան Մոլի տեղեկատու բաժնի աշխատակիցը իրավունք ունի վերցնել համապատասխան քարտերը և ապասկտիվացնել դրանք:
- 6.3 Երևան Մոլի տեղեկատու բաժնում քարտապանների միջև կտրոններ փոխանակելու դեպք նկատելիս տեղեկատու բաժնի աշխատակիցը իրավունք ունի գործընթացում ներգրավված քարտապաններից վերցնել ակումբային քարտը և ապասկտիվացնել այն:
- 6.4 Երևան Մոլի վարձակալների աշխատակիցները իրենց աշխատավայրից ՀԴՄ կտրոն կարող են ներկայացնել 1 ամսվա ընթացքում ոչ ավել, քան 2 անգամ:

Հայերեն և անգլերեն կանոնների միջև առկա հնարավոր տարբերությունների դեպքում հիմք է ընդունվում հայերեն տարբերակը: